ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի մայիսի 19-ին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 2. Օրենքի հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**1) քննչական կոմիտեում ծառայություն՝** պետական ծառայության տեսակ, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով.

**2) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ՝** *քննչական կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների պետերը և նրանց տեղակալները, բաժնի պետերը, բաժնի պետի տեղակալները, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները և քննիչները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված հիմքերով քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող ծառայողները*, որոնք «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում են ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք:

***(2-րդ հոդվածը փոփ., լրաց. 17.01.18 ՀՕ-79-Ն, 09.12.20 ՀՕ-494-Ն)***

***(09.12.20 ՀՕ-494-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

**Հոդված 10. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները**

***(վերնագիրը փոփ. 09.12.20 ՀՕ-494-Ն)***

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները:

2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

3. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում մասնակցության դեպքերի:

***(10-րդ հոդվածը փոփ. 09.12.20 ՀՕ-494-Ն)***

***(09.12.20 ՀՕ-494-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***